


4551
Գ. Ա. ՇԱԲԱՐՅԱՆ

ՁԻՆՐԻ ԽԼԱԽՏ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ






Գ. Ա. ՇԱԲԱՐՅԱՆ

619.1:616.954



ՁԻԵՐԻ ԽԼԱԽՏ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

19406 A I
4407



Պատ. խմբագիր՝ Արմենոյան
Լեղզ. խմբագիր՝ Վ. Բաբայան
Մրբագրիչ՝ Ի. Մովսիսյան

Թույլատրված է Գլխավոր Ձև 305

Հանձնված է արտադրության 1934 թ. նոյեմբերի 3-ին

Ստորագրված է ապագրելու 1934 թ. նոյեմբերի 22-ին

Հրատ. Ձև 146. Երբամ 3000. Գլխավոր 671

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԻՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

Սորհրդային Միութեան առանձին հանրապետութիւններում ու շրջաններում խլախտը տարածված հիվանդութիւնն է և մեծ կորուստ է պատճառում ժողովրդական անտեսութեանը, հատկապէս սոցիալիստական անասնապահութեանը:

Մեզ մոտ, Հայաստանում խլախտը նույնպէս տարածված հիվանդութիւնն է և մի շարք շրջաններում հայտարերված է:

Սլախտը միասնորակ կենդանիներէ վարակիչ հիվանդութիւնն է. պլասմորայէս վարակվում են ձիերը, շորիններն ու եղերը, հաղվագյուտ դեպքում՝ նաև ուղտերը:

Սոշոր յեղջերավոր անասունները, նաև վոչխարը, այծը, խոզը բնական պայմաններում չեն վարակվում, սակայն արհեստական վորոշ պայմաններ ստեղծելով, այդ կենդանիներին նույնպէս կարելի յի վարակել: Բայց դա մեզ համար այնքան էլ կարևոր նշանակութիւն չունի, քանի վոր այդ կենդանիները բնական պայմաններում չեն վարակվում և անմիջապէս վա-

բակ արտադրել ու առողջ կենդանիներին վարակել չեն կարող: Գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել միասնակ կենդանիների, 'մանավանդ՝ ձիերի, եղերի և շորիների վրա, քանի վոր խլախտով վարակվում են այդ կենդանիները, վորոնք մեր անտեսության մեջ խոշոր դեր են կատարում: Պետք ենշել, վոր խլախտ հիվանդությունը ձիերի, շորիների և եղերի նկատմամբ, ընդհանուր առմամբ, միևնույն ընթացքն ունի, բացառությամբ վորոշ տարբերությունների, վորոնք վճռական նշանակություն չունեն: Այդ իսկ պատճառով, խոսելով ձիերի խլախտ հիվանդության մասին, նույնը պիտի ասել շորիների և եղերի վերաբերյալ:

ԽԼԱՄՏ ՇԻՎԱՆԴՈՒՅՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՅՁԱՌՆԵՐԸ

Խլախտ հիվանդությունն առաջացնում են հասարակ աչքով անտեսանելի մանրեններ, վորոնց կարելի չե տեսնել միմիայն խոշորացնող գործիքների միջոցով (մանրադիտակ): Այդ մանրենները կարող են առաջացնել միմիայն այդ հիվանդությունը, ուրիշ հիվանդություններ առաջացնել չեն կարող: Այդ մանրենները արտաքին միջավայրի գործոնների ազդեցությանը յերկար չեն դիմանում, արեգակի լույսը նրանց սպանում է մեկ օրվա ընթացքում, յեռացրած ջու-

ըը՝ մի վարկանունն նեխվող նյութերում դիմա-
 նում են մինչև 12—24 սր. շորացումը սպա-
 նում է 7—14 որվա ընթացքում. խոնավ միջա-
 վայրում կենդանի յեն մում 15—30 որ. կրեպի-
 նի, լիզոլի, կարբոլաթթվի և կրաջրի թույլ լու-
 ծույթները նրանց սպանում են 1—5 բուպեյում:

ԻՆՉՊԵՍ Ե ՏԱՐԱԾՎՈՒՄ ԽԼԱԽՏ ՆԻՎԱՆԴՈՒՅՅՈՒՆԸ

Սլախա հիվանդության վարակի գլխավոր
 աղբյուրը հանդիսանում է հիվանդ ձին, շորին
 կամ եղը: Բավական և առողջ ձիուն մի քանի որ
 կապենք խախտով հիվանդ ձիու մոտ, վոր նա
 նույնպես վարակվի խախտով:

Սլախտով հիվանդ ձիու վարակն արտադր-
 վում և դլխավորապես քթից հոսող թարախի,
 մաշկի, վերքի, մեզի և կղկղանքի միջոցով:

Ամենից վարակիչը քթից արտադրվող թա-
 րախն է: Սլախտով հիվանդ ձիու քթի թարախի,
 մեզի և կղկղանքի մեջ միշտ կարելի յե հայտա-
 բերել այդ հիվանդության մանրենները:

Վարակ արտադրող հիվանդ ձիու վարակը
 տարածվում է կերի, ջրի, դամի այլ իրերի և
 մարդկանց միջոցով, վորոնք անմիջական շփման
 մեջ են գտնվում հիվանդ ձիու հետ:

Առողջ ձիերը դիւստփորապէս վարակվում են մարսողական որդաններէ միջոցով, յերբ նրանք ուտում են խախտով վարակված կեր կամ խմում են խախտով վարակված ջուր:

Հիվանդ ձիու խնամողը նույնպէս հանդիսանում է վարակը տարածող, յերբ նա շիման մեջ գանվելով հիվանդ ձիու հետ, յուր ձեռքերով, հագուստներով և վոագերով վարակը տեղափոխում է առողջ ձիու վրա:

Առողջ ձին պահելով հիվանդ ձիու կողքին, բնականաբար, առողջը յենթակա յն վարակման վտանգի, փորովհետև շարունակ իրար հետ շրփման մեջ գանվելով, տուղջը կերէ կամ ջրէ միջոցով ներս է բնդաւնում հիվանդից արտադրվող վարակը:

Միևնույն դուղով ջրելը նույնպէս նպաստում է վարակի տարածմանը:

Արտափայրը, վարտեղ միևնույն ժամանակ արածում են հիվանդ և առողջ ձիերը—հանդիսանում է վարակի տարածման աղբյուր:

Հիվանդ ձին շարունակ վարակ արտադրելով—կեղաւտում և վարակում է արտափայրի խոտը կամ շրջակայքում գանվող ջուրը և վտանգի յենթարեւում առողջ ձիուն:

Խլախտից ազատ անտեսութեան ձիերը վարակվում են այն դեպքում, յերբ այդ անտեսու-

Թշուհը հիվանդ ձի յե բերվում: Բազմական ե, վոր ձիարուծական մի խոշոր տնտեսություն խլախտով հիվանդ ձի բերվի—տնտեսության բուր ձիերն տրդեն վարակվելու վտանդի յննթա-կա յնն:

Հաճախ անմիջապես հնարավոր չի լինում հայտարերել խլախտով վարակված ձիու հիվանդ լինելը և այդպիսի ձին կապելով առողջ ձիերի գոմում, աննկատելի կերպով կարող ե վարակը տարածվել:

Այդպիսի դեպքերում պետք ե վերին առաի-նանի զգուշ լինել և ժամանակին քննել տնտեսու-թյունը բերվող նոր ձիու առողջությունն ու հե-տո միայն տանել առողջ ձիերի գոմը, հակառակ դեպքում վարակն ուժեղ կերպով կտարածվի և տարիների ընթացքում հնարավոր չի լինի այն արձատխիլ անել տնտեսությունից: Բնական պայմաններում ձին կարող ե մի քանի շաբաթվա ընթացքում վարակվել խլախտով և ինքը յուր հեր-թին վարակել առողջ ձիերին:

Խլախտի վարակի տարածման գործում մեծ դեր են խաղում ձիապանները: Միևնույն ձիապա-նը, միաժամանակ խնամելով խլախտով հիվանդ և առողջ ձիերին՝ նա յուր ձեռքերով, շորե-րով և կեր տալու միջոցով վարակում ե նաև

առողջ ձիուն: Հիվանդ ձիերի նկատմամբ պետք է նշանակել հասուկ հսկողութիւն. նրանց համար պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, վորպէսզի նրանց խնամող անձնակազմը վոչ մի շփուլն չունենա տողջ ձիերի և նրանց սպասարկման այլ պայմաններէ հետ:

Հիվանդ ձիերի մեկուսացման պայմաններէ մասին մանրամասն նշվում են գրքուշէլի վերջում:

ԽԼԱԽՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խլախտը լինում է յերեք տեսակի, նայած թէ կենդանու մարմնի վոր մասումն են ընակվում նրա մանրեները և հիվանդութեան ինչ արտաքին նշաններ ունի:

1. Թոքերի խլախտ. — Թոքերի խլախտի դեպքում գլխավորապէս վնասվում են կենդանու թոքերը: Կենդանին հետզհետե նիհարում է և կորցնում աշխատունակութիւնը:

Հաճախ նկատվում է չոր հագ: Սկզբում ջրմասսիւծանը բարձր է լինում: Թոքերի խլախտը շատ տեփոզական է լինում և սկզբում խլախտ բնորոշող համարյա արտաքին վոչ մի նշաններ չեն լինում: Մինչև վոր ակնահայտ կդառնա հիվանդութեան արտաքին կլինիկական նշանները, այդ ժամանակամիջոցում նա արդեն վարակ և արտադրում և վարակում է շրջապատի առողջ կենդանիներին:

Հետդիտեալ վարակը թոքերից անցնում և
գեներանու մյուս որդաններին, հաճախ քթանցքե-
րին և մաշկի վրա և առաջացնում ձիերի խլախտ
հիվանդութեանը հասուկ բշտիկներ և խոցեր:

II. Քրի խլախտ.—Քթի խլախտի դեպքում
վարակը գլխավորապես բնակվում է քթանցքի լոր-
ձաթաղանթի վրա:


Վարակման սկզբնական շրջանում քթանցքե-
րից հասում է, ջրանման հեղուկ: Հետագայում
այդ հեղուկն ավելի յե թանձրանում և դառնում
և կաշուն ու թարախանման: Հաճախ թարախի
հետ խտոն են լինում արյան բծեր: Հետագա-
յում քթանցքի լորձաթաղանթի վրա առաջանում
են դեղնադույն փոքրիկ բշտիկներ, փորոնք
պատուվելով արտադրում են թարախանման հե-
ղուկ, իսկ բշտիկի տեղը փոքրիկ խոց և առաջա-
նում: Այդ փոքրիկ խոցերը հետագայում մեծա-
նում են, իրար հետ միանում և լորձաթաղանթի
վրա առաջացնում կարմրավուն կամ սպիտակ
գույնի սպիներ, փորոնք հաճախ աստղաձևով են
լինում: Այդ աստղաձևով սպին քթի խլախտը բը-
նորոշող գլխավոր նշաններից մեկն է հանդիսա-
նում:

Պատահում է, փոք քթանցքերից մեկն է վա-
րակվում խլախտով, իսկ մյուսը՝ վոչ:

Նայած քթանցքերից վերն և վարակված, ըստ
այնմ ել ուռչում և համապատասխան կողմի
յինթամոնոտային ավշային գեղձը, վորին սկզբը
նական շրջանում գիպչելը ցավ և պատճառում:

Յեթե յերկու քթանցքն ել վարակված են, ա-
պա ուռչում են նաև յերկու կողմի ավշային
գեղձերը: Ավշային գեղձերի ուռած լինելը ձեռ-
քով կարելի չե շշտփել յինթամոնտային հետևյալ
մասի ներսի կողմից: Իսկ յեթե ուռուցքը մեծ և,
հեշտութայամբ կարելի չե սեանել (տես նկ. 1):

III. Մաշկային խլախս:
Մաշկային խլախսի գեղ-
քում գլխավորապես վնաս
վում է ձիու մաշկը կամ
յինթամաշիք: Մաշկի վրա
սկզբնական շրջանում
նույնպես առաջանում են
բշտիկներ, վորոնք հետա-
գայում բացվելով առա-
ջացնում են խոցեր: Այդ
խոցերը հաճախ առաջանում են վտանների (տես
նկ. 3), կրծքի վանդակի և վորի վրա, վորոնք
հետագայում մեծանալով արատավորում են կաշու
գեղձագույն կամ կարմրագույն թաբախ:



նկ. 1.

Ուռած յինթամոնոտային ավշա-
յին գեղձը խլախսի գեղքում
նկ. 3)

Սյդ խոցերը շատ դժգոհութեամբ են բուծ-
վում և հազվադեպ դեպքերում են առողջանում:
Սոցերը, հանախ, հետդիեաե մեծանալով վնաս-
ուում են կենդանուն:

Մաշկային խախտի դեպքում կենդանու-
մաշկի վրա միաժամանակ նկատվում են խմորա-
նման ուռուցքներ, վարոնց մեջ մեծ քանակու-
թյամբ հեղուկ և կուտակված լինում:

ԽԼԱՍՏԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Խախտը յուր տեղողութեամբ լինում և
յերկու տեսակ՝ սուր և խրոնիկական (տևական):

Խախտի տեղողութեամբ հնարավոր է
ճիշտ վորոշել: Առհասարակ սուր խախտի դեպքում
կենդանին մահանում է 15—30 օրվա ընթացքում,
իսկ խրոնիկական խախտի դեպքում հիվանդու-
թյունը տեղում եամիսներ և նույնիսկ տարիներ:

Արտաքին կլինիկական ախ բոլոր նշանները,
վարոնց մենք թվեցինք խախտի տեսակների
մասին խոսելիս,— սուր խախտի դեպքում
ավելի յեն աչքի ընկնում, արագ են զարգանում և
կարճ ժամանակվա ընթացքում կենդանուն մա-
հացնում:

Սուր խախտի դեպքում պարտադիր չէ,
վարաչազի հիվանդութեան վերը թված բոլոր
նշանները յերեկան գան:

Այդ նշանները շատ հազվագյուտ դեպքերում են միատեսակ լինում: Հաճախ դերակշռում են խլախափ մի վորեւ տեսակի նշանները: Որինակ՝ հաճախ կարելի չէ հանդիպել քթի խլախափ նշանների, քան թե ժաշկային կամ թոքերի:

Ձիերը և շորինները սուք խլախափ հազվագյուտ դեպքերում են վարակվում, իսկ եղջեր, ընդհակառակը, միշտ վարակվում են սուք խլախափ:

Ձիերը հաճախ վարակված են լինում խլանիկական խլախափ, վոքը յերկար տարիների ընթացքում կարող և աննկատելի մնալ:

Նրանիկական խլախափ դեպքում շատ հաճախ կլինիկական վոչ մի նշան չի նկատվում, բայց արդյոք կարելի՞ չէ ասել

նկ. 2. Մաշկային խլախափի խոցերը ձիու վրա:

վաք ամփյալ ձին խլախափով հիվանդ չէ, իհարկե վոչ, և վոչ վոք էլ չի կարող ասել, վաք ամփյալ ձին առողջ և:

Շատ դեպքերում համոզված լինելով, վոր
տվյալ ձին առողջ է, սակայն քննելուց հետո
պարզվում է, վոր նա խսկապես հիվանդ է:

Պետք է դիտենալ, վոր խլախտ հիվանդու-
թյունն ունի յուր թաքուն շրջանը, այսինքն
մի շրջան, յերբ թեև ձին վարակված է լինում
խլախտով, սակայն հիվանդության արտաքին
նշանների քայտակալութունը միանգամայն ան-
կասկածելի չէ, դարձնում նրա հիվանդ լինելը:
Կարելի չէ անդել, վոր ձիերը դլխավորապես
առատապում են խլախտի այդ տեսակով, վորը
և ամենից վտանգավորն է:

ԻՆՁՊԵՍ ԲՆՈՐՈՇԵԼ ԽԼԱԽՏԸ

Հիվանդության արտաքին նշաններով դժվար
է ճիշտ բնորոշել խլախտ հիվանդությունը, բայց
յեթե հայտարերենք խլախտի դլխավոր նշան-
ներից մի քանիսը, համոզված կերպով կարելի
չէ տանլ, վոր ձին առատապում է խլախտով, վոր
վերջնականապես կարելի չէ հաստատել միմիայն
արյան քննություն կատարելուց և աչքի փորձը
դնելուց հետո:

Սլախտը ճիշտ կերպով կարելի չէ բնորոշել,
յերբ առկա չեն հիվանդության արտաքին մի քանի
դլխավոր նշանները, ինչպես, ջրմանցքերից հոսող

Թարախը, յենթաճնոտային ավշային գեղձերի ուռեղը և քթանցքերի լորձաթաղանթի վրա խոցերի կամ սպիհների ներկայութեամբ: Իսկ յեթե այդ նշաններից վորևե մեկը լինի, դժվար է պնդել, զոր տվյալ կենդանին տառապում է խլախոտով: Այդպիսի դեպքերում կարելի յե և պետք է միմիայն կասկածել, վորովհետև կան մի շարք հիվանդութեաներ, վորոնք առանձին վերցրած նույնպես ունեն խլախոտի այդպիսի նշաններից վորևե մեկը:

Խլախոտ հիվանդութեամբ կասկածելի ձևերին պետք է անմիջապես առանձնացնել, նրանց արյունը վերցնել (անասնաբուժի միջոցով) և ուղարկել համապատասխան լաբորատորիա քննելու:

Վարպեզի համոզվենք, վոր տվյալ ձին խկապես տառապում է խլախոտով, բավական է կատարել, այնպես կոչված, աչքի փորձ, վորը պետք է կատարի անպայման անասնաբուժը:

Աչքի փորձի համար գործ էածվում դեղնավուն գույնի մի հեղուկ, վորը կոչվում է մալեին (малеин) և պատրաստվում է խլախոտ հիվանդութեամբ առաջացնող մանրեններից:

Մալեինից մի քանի կաթիլ (2—3) կաթեցնում են ձիու առողջ աչքի մեջ և 4—6 ժամից հետո դիտում են այն փոփոխութեաները, վոր

րոնք տեղի յեն՝ ունենում այդ աչքում: Նայած թե
աչքը ինչպիսի փոփոխությունների յե յեն թարկ-
վել, կարելի յե յերեք յեղբայրացության հանդերձ:—

1. Յեթե աչքի լոբձաթաղանթը և կողերի
ներքը կարմրում են և աչքից թարախ ե հոսում,
ուրեմն փորձը գրական է, այսինքն՝ ձին հիվանդ
ե (տես. նկ. 3):

2. Յեթե աչքը կարմրում ե, բայց թարախը
թույլ ե արտահայտված, ուրեմն ձիու խլախտով
վարակված լինելը կասկածելի յե:

3. Բացասական, յերբ ձին հիվանդ չե և
աչքում վաչ մի փոփոխություն չի նկատվում:

Ձիերի խլախտը ճիշտ քնորոշելու համար
այժմ աչքի վերձը համարվում ե ամենից վատա-
հեղին: Շրջանային ամեն մի անասնաբուժ պարտա-
վոր ե, իրեն դիմելու դեպքում, աչքի փորձ կա-
տարել:

Այդ իսկ պատճառով ձի դեկլիս միշտ պիտի
դիմել անասնաբուժին՝ աչքի փորձը կատարելու
համար, զորպեսզի համոզվենք, վոր դնվելիք ձին
խլախտով հիվանդ չե: Բացի աչքի փորձից, խլախտ
հիվանդությունը ազիլի ճիշտ վորոշելու համար,
նաև լաբորատորական քննության են յեն թար-
կում ձիու արյունը: Արյան քննության փորձի
տեխնիկան բարդ լինելու պատճառով հնարավոր
չե այստեղ մանրամասն նկարագրել:

Քննութեան համար արդունը վերջնում և
անասնաբուժը՝ լծային յերակկից (վզի վրա)։



Նկ. 3.

Աչքի փորձը դրական, յերեւում և աչքից հոսող քարտիր

Այն դեպքում, յերբ աչքի փորձն ու արյան
քննութիւնը միասին վերցրած տալիս են դրական
արդյունքներ, ալիւի քան համոզված պիտի լինել,
վոր ձին իսկապես տառապում և խլախտ հիվան-
դութեամբ։

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ԽԼԱԽՏԻ ԴԵՍ


Գիտութեանը մինչեւ հիմա հայտնի չեւ զոր
մի դեպք, վոր խախտով հիվանդ ձիուն դեղորայքով
բժշկելը հաջողած լինի և այդ ուղղութեամբ
կատարված փորձերը հաջող չելք ունեցած լինեն:

Առայժմս գիտութեանը անդոր և խախտով հի-
վանդ կենդանունը բուժել, բայց դա դեռ չի նշանա-
կում, վոր խախտի դեմ պայքար մղել հնարա-
վոր չեւ: Ընդհակառակը, չնայած, վոր մինչեւ հի-
մա խախտը բուժելու համար հայտարարված չե-
վերևե միջոց, բայց այնուամենայնիվ անասնա-
բուժութեանը հաջող կերպով պայքարում և
խախտի դեմ և կարողանում և այն արմատա-
խիլ անել մեր տնտեսութեան ներքին:

A 4407

Սլախտի դեմ պայքարելու միակ միջոցը՝ անաս-
նաբուժա-ասնիտարական նախազգուշական մի-
ջոցառումներն են: Այդ միջոցառումները տար-
վում են գլխավորապես յերկու ուղղութեամբ.—

1) վաչնչացնել խախտ հիվանդութեան ակներեւ
նշաններն ունեցող ըստը ձիերին, յերբ նրանց
արջան քննութեանը և աչքի փորձը դրական
արդյունքներ և տալիս, և 2) մեկուսացնել խ-
խտ հիվանդութեամբ կասկածելի ըստը ձիերին:
Այն ձիերը, վորսնք ունեն խախտ հիվանդու-
թեան մի շարք գլխավոր նշանները (միակողմանի



կամ յերկկողմանի թարախահասում՝ քթանցքերից, յինթածնոտային ավշային գեղձերի ուռչում, խոցեր մաշկի վրա, սպիլ քթանցքի լարձաթաղանթի վրա և այլն) և նրանց վրա կատարված աչքի փորձը և արյան քննությունը դրահան և, այդպիսի ձևերն անմիջապես ռիսի վոչնչացնելը

Պիտի վոչնչացնել նաև այն ձևերը, վորոնք չունեն խլախա հիվանդության վերը հիշած բոլոր նշանները, բայց ունեն խլախաը ընդարձող նշաններից վորեւ մեկը և նրանց աչքի փորձն ու արյան քննությունը դրահան արդյունք են տալիս

Անկախ աչքի փորձի և արյան քննության արդյունքներից, այն ձևերը, վորոնք ունեն ուժեղ կերպով տարածված հիվանդության պարզ արտահայտված բոլոր նշանները, նույնպես յինթակա յեն վոչնչացման:

Խլախաով հիվանդ ձևերի վոչնչացնելը պետք է կատարել դոզուլությամբ՝ ձեռք աննելով համապատասխան անասնաբուժական միջոցներ:

Նախ և առաջ խլախաով հիվանդ կենդանուն պետք է սպանել անասնաբուժամանոցում, կամ 2-3 մետր լորտությամբ վորված վտախ մտա Սպանելուց հետո կաշին զանազան պիտի պատատանել, վորպեսզի շահախնդիր մարդիկ չմարդկեն այն և այդպիսով նպատեն վարակի տարածմանը:

Ստանված ձևու գիտելը դրել վտար, վրան լրջ-
նել ախտահանիչ վորևն հեղուկ կամ կրաջուր
և թաղել:

Խլախտով հիվանդ ձիու վահնչացումը պետք է
կատարել տեղի անասնաբուժի և միլիցիայի ան-
միջական մասնակցութեամբ:

Այն վայրը, վորտեղ հայտարարված է յեղել
խլախտը, հայտարարվում է խլախտի տեսակետից
վտանգված և խլախտով հիվանդ վերջին ձիու
ուպանելուց մի ամիս հետո հայտարարվում է ա-
պահով, կիրառելով անասնաբուժա-սանիտարական
միջոցառումներ (գոմի, գոմադրի, թամբի, լծա-
սարքի և գոմի այլ իրերի լրիվ ախտահանում):

Այն ձիերը, վորոնք չունեն խլախտ հիվան-
դութեան արտաքին կլինիկական նշաններ, բայց
տալիս են աչքի վորձի գրահան կամ կոսկածելի
արդյունք, անմիջապես առանձնացվում են:

Առանձնացվում են նույնպես այն ձիերը, վա-
րոնք ունեն հիվանդութեան արտաքին կոսկածելի
նշաններ և տալիս են աչքի վորձի ու արյան
քննութեան կոսկածելի կամ բացասական ար-
դյունք:

Խլախտով կոսկածելի ձիերի համար, վորոնք
կոչվում են մալեխնչիկներ, կազմակերպվում է հա-
տուկ անտեսութուն, վորտեղ հավաքում են շու-

լոր այդպիսի ձիերին և անասնաբուժական հաս-
տուկ հսկողութեամբ նրանց ոգտագործում:

Այդպիսի անտեսութեանն կազմակերպում
են այն շրջաններում, խորհանտեսութեաններում
և կոլանտեսութեաններում, վորտեղ խլախտ հի-
վանգութեանն ուժեղ կերպով տարածված է:

Ավելի նպատակահարմար է այդպիսի ձիերը
կենտրոնացնել այնպիսի կոլանտեսութեանում
կամ խորհանտեսութեանում, վորոնք ձիաբու-
ժութեամբ չեն զբաղվում, այլ ձիերն ոգտագոր-
ծում են վորպես քաշող ուժ:

Մալեինչիկները անտեսութեանն առնվում է
անասնաբուժական հաստուկ հսկողութեան տակ և
3 ամիսը մի անգամ կատարվում է քննութեան
ախտորոշման բոլոր միջոցներով:

Խլախտով կասկածելի այն ձիերը, վորոնք
կրկնակի քննութեանից հետո տալիս են աչքի վոր-
ձի և արյան քննութեան դրական արդյունք՝ վոչըն-
չացվում են, իսկ այն ձիերը, վորոնք տալիս են
արյան քննութեան բացասական արդյունք, իսկ
աչքի վորձի դրական արդյունք, շարունակում
են միայլ մալեինչիկները անտեսութեան մեջ:

Այն դեպքում, յերբ ավյալ շրջանում չկա
մալեինչիկները անտեսութեան, կամ թե հնարա-
վոր չէ խլախտով կասկածելի ձիերին տեղափո-

խել մի ուրիշ շրջան, վորտեղ այդպիսի ոնտեսություն կա, ուստի տվյալ շրջանի կոլանտեսություններում կամ խորհանտեսություններում, վորտեղ հայտաբերված են խլախտով կասկածելի ձիեր, կազմակերպում են մալեինչիկների խումբ և անասնաբուժական հատուկ հսկողությամբ այդ ձիերին շահագործում են:

Մալեինչիկների խմբում գտնվող ձիերին յերբեք չի կարելի տեղափոխել առողջ ձիերի մոտ: Այդ ձիերն ոգտագործվում են միմիայն վորպես քաշող ուժ և վոչ մի դեպքում նրանց չպետք է ոգտագործել վորպես զամբիկ կամ արտադրող:

Առանց անասնաբուժի թույլտվության արգելվում է վաճառել մալեինչիկ ձին կամ նրան մի այլ տնտեսություն փոխադրել: Մալեինչիկների վրա պետք է հատուկ խնամք և հսկողություն ունենալ:

Մալեինչիկներին խնամող անձնակազմը յերբեք չիման մտ չպետք է լինի տնտեսության առողջ ձիերի հետ կամ առողջ ձիերը խնամող անձնակազմի հետ: Արգելվում է մալեինչիկների գոմից առողջ ձիերի գոմը մտնել: Ամեն մի մալեինչիկ պետք է ունենա յուր առանձին լծասարքը, խոզանակը, ջրելու ամանը և այլն: Գոմը հաճախ

(ամիսը մեկ անգամ) պիտի ախտահանել $3\frac{0}{10}$ կու-
ուստիկ սողայով կամ կրաջրով: Գումաղբը սեղն
ու սեղը պետք է կամ ախտահանել վերոհիշյալ
լուծույթներով կամ այրել:

Անհրաժեշտ է շեշտել, վոր խլախար վտանգ
է սպառնում նաև մարդկանց, վորոնք անմիջա-
կան շփման մեջ են գտնվում խլախարով հիվանդ
ձիու հետ: Թեկուզ մարդկանց մեջ վարակման
հազվագյուտ դեպքեր են հայտարելված, բայց և
այնպես խլախարով հիվանդ ձիերին խնամող անձ-
նակազմը պետք է վերին աստիճանի զգուշ
լինի և վորոշ նախազոռչական միջոցառումներ
կիրառի (խնամող անձնակազմը հաճախ պիտի
յենթարկվի բժշկական քննության, ունենա հա-
տուկ հագուստ, հաճախ ախտահանի ձեռքերը,
հաղուստը և այլն):

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԽԼԱԽՏԻ ՄՈՒՏՔԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Ամեն մի խորհանտեսություն կամ կու-
սանտեսություն նոր ձիեր բերելու կամ գնելու
դեպքում, նրանց համար մի ամսվա տեվողու-
թյամբ պիտի սահմանի արգելակ (կարանտին):

2. Տնտեսություն բերվող բոլոր ձիերը
նախ և առաջ պիտի յենթարկվեն անտանաբու-

ժողովան քննութեան և կատարվի խլախար ախտորոշող աչքի փորձը: Բացասական արդյունք ստանալու դեպքում միայն սահմանում են միամսյա արգելադրում:

3. Արգելակի սահմանված ձիերի մեջ խլախտ հայտարարելու դեպքում տվյալ վայրը հայտարարվում է խլախտով վտանգված և ձեռք են առնվում համապատասխան միջոցներ (վերը ցույց տված ձևով):

4. Տնտեսութունը բերվող նոր ձիերը յերբեք չպետք է կապել տնտեսութան առողջ ձիերի դամբում, վորովհետև այդպիսի ձիերը կարող են իրենց հետ բերել խլախտի վարակ:

5. Ամեն մի ձիու համար առանձնացնել հատուկ սարքավորում, կերակրել ու ջրել առանձին և նրանց խնամելու համար նշանակել հատուկ անձնակազմ:

Միջ ու ցան, անհատական տնտեսութուններում դժվար էր պայքարել խլախտի դեմ, վորովհետև անհատական տնտեսութունը շահադրողոված չլինելով պետական հասարակական շահերով, ամեն կերպ աշխատում էր թաղցնել խլախտով հիվանդ յուր ձին և դրանով նպաստում էր վարակի տարածմանը: Այժմ, յերբ տնասնապահութունը հիմնականում կենտրոնացված է

խորհ. և կոլանտեսուլթյուններում, վորտեղ ավելի կազմակերպված պայքար է մղվում վարակիչ հիվանդությունների դեմ, վոչ մի կասկած չի կարող լինել, վոր վաղ թե աւշ խլտխար մեր անտեսություններից արմատախիլ կարվի:



ՀԱՅԿ ԳՐԾ. ԻՌԱՆԻՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԿԱՆ
ԳՐԱՐԱՆ № 2
... ԿԱՅԿՈՒՄ

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039244

(059)

A $\frac{1}{4407}$

9422 6 15 4.



Г. А. ШАКАРЯН
САП ЛОШАДЕЙ